«ՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ» ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ Ս. Լ.

«Պետական տարածք» աշխարհաքաղաքական ռեսուրսի հետազոտությունը աշխարհաքաղաքականության ամենակարևոր խնդիրներից է: Սրա արժանահավատ արդյունքները ցանկացած պետությանը հնարավորություններ կընձեռեն պատկերացումներ կազմելու իր տարածքի՝ որպես աշխարհաքաղաքական ռեսուրսի վիճակի մասին, ուսումնասիրել դրա բնութագրիչ-ռեսուրսները հզորության վերածելու, արդյունավետ օգտագործելու, աշխարհաքաղաքական մրցակցության արդյունավետությունը բարձրացնելու հնարավորությունները, կօժանդակեն ժամանակակից աշխարհաքաղաքականության այնպիսի կարևորագույն տեսական-մեթոդաբանական խնդիրների լուծմանը, ինչպիսիք են պետության աշխարհաքաղաքական ռեսուրսների, անվտանգության ու զարգացման հետազոտության մեթոդաբանությունների մշակումը, էքսպանսիայի տարբեր տեսակների արդյունավետության ու պետության համալիր աշխարհաքաղաքական հետազոտության մեթոդաբանությունների մշակումը:

Տեսական-մեթոդաբանական այս կարևորագույն խնդիրների լուծման դեպքում աշխարհաքաղաքականության զարգացման և պետության աշխարհաքաղաքական գործառնությանը գիտական աջակցության հնարավորությունները կտրուկ կմեծանան:

Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսները աշխարհաքաղաքական գործընթացներում որոշակի և անկանխատեսելի խնդիրների լուծման համար պետության օգտագործելիք հնարավոր և հասանելի, տվյալ պահին հայտնի միջոցների և դրանց ստացման աղբյուրների ամբողջությունն է[1]:

Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր, աշխարհաքաղաքական ամենակարևոր ռեսուրս է համարվում տարածքը, պետության համար՝ իր տարածքը: Պատճառն այն է, որ տարածքը լինելով ընդհանրացնող, ինտեգրալ իրողություն, կրում է նաև աշխարհաքաղաքական այլ ռեսուրսներ:

Աշխարհաքաղաքականությունը՝ որպես գիտության ճյուղ, իր ողջ պատմության ընթացքում ուսումնասիրել է համաշխարհային տարածության ու դրա տարբեր մասերի համար մրցակցության գործընթացը: Ավանդական աշխարհաքաղաքականության դպրոցները, որոնց հետազոտությունները հսկայական դեր են խաղացել XX դ. միջազգային հարաբերությունների ոլորտում, տարբեր պետությունների աշխարհաքաղաքական էքսպանսիան արդարացնող դպրոցներ են: Դրանք՝ բրիտանական, գերմանական, ամերիկյան դպրոցները, իրենց հետազոտությունների հիմքում դնելով գերտերությունների,

---

[1] **Սարիբեկյան Ս. Լ.,** *«Պետության աշխարհաքաղաքական ռեսուրսներ» հասկացությունը (Կանթեղ, 2011, N 3, էջ 126):*

համապատասխանաբար Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական շահերը, փորձել են արդարացնել աշխարհաքաղաքական կարևոր նշանակության տարածքները (մասնավորապես՝ Երկրի սիրտը՝ Հարթլանդը (Heartland)) նվաճելու և վերահսկելու նկրտումները, այդ նպատակին ուղղված քաղաքականությունը: Աշխարհաքաղաքական մոդելները (մասնավորապես՝ Հ. Մաքինդերի, Կ. Հաուսհոֆերի, Ն. Սպայկմենի[2]), որոնք մեծ դեր են խաղացել Երկրորդ աշխարհամարտի արդարացիությունը հիմնավորելու կամ սառը պատերազմում ռազմավարություն մշակելու համար, երկրի աշխարհաքաղաքական գլխավոր տարածքները վերահսկելու հիմնավորումներ են (հեղինակների կարծիքով): Իսկ դրանց հիմքը քաղաքական համակարգի գործունեությունը տարածքի կարևոր բնութագրիչներով, մասնավորապես՝ բնական պայմանների տարբերություններով և բնական ռեսուրսների անհավասարաչափ բաշխվածությամբ բացատրող աշխարհագրական դետերմինիզմն է:

Թեև աշխարհաքաղաքականության համար «տարածքի» և «տարածության» կարևորությունը միշտ մեծ է եղել, սակայն նրա զարգացման տարբեր փուլերում տարբեր է եղել: «Գեոպոլիտիկա» («աշխարհաքաղաքականություն») հասկացության երկու բաղադրիչներից մեկը՝ «գեո»-ն, առաջին հերթին նշանակում է պետական քաղաքականության վրա, բառի ամենալայն իմաստով, աշխարհագրական գործոնների ազդեցություն, իսկ երկրորդ իմաստով (ձևավորվել է XX դ. վերջին, XXI դ. սկզբին) օգտագործվում է որպես քաղաքականության «համամոլորակային» չափում, բնութագրում է գերտերությունների կամ ռազմական միությունների փոխհարաբերությունները՝ որպես «քաղաքակրթությունների բախում» կամ որպես համաշխարհային համակարգի ընդհանուր կոնֆիգուրացիայի փոփոխություն, օրինակ, անցում երկբևեռից միաբևեռի կամ բազմաբևեռի:

Հասկացության երկրորդ մասը՝ «պոլիտիկան» («քաղաքականությունը»), տվյալ ենթատեքստում նշանակում է գերիշխանության իրականացում, իշխանության, տարածության նվաճում և յուրացում: Վերջին ժամանակներս դա նույնպես էական փոփոխություն է կրել՝ այն իմաստով, որ աշխարհաքաղաքականության ժամանակակից դերակատարները (ակտորներ) ոչ այնքան տենչում են նվաճել և յուրացնել նոր տարածքներ, որքան վերահսկել հնարավոր մեծ տարածքներ, վերահսկել ոչ թե տարածքներն ամբողջությամբ, այլ՝ մեծ մասամբ դրանց հաղորդակցական գծերը և հոսքերը (ֆինանսական, ապրանքային, աշխատուժի և այլ)՝ դրանով օժանդակելով իրենց զարգացման և բարգավաճման համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելուն[3]:

---

[2] *Տե՛ս* Колосов В. А., Мироненко Н. С. *Геополитика и политическая география. Учебник для вузов, М., 2001, с. 56, 61, 68, 93.*

[3] Исаев Б. А. *Геополитика. Учебное пособие, СПб., 2005, с. 10-11.*

Թե ավանդական և թե ժամանակակից աշխարհաքաղաքականության ներկայացուցիչների կողմից տրված «աշխարհաքաղաքականության» սահմանումները գիտության այս ճյուղի ուսումնասիրության առարկայի բովանդակության մեջ շեշտում են կա՛մ «աշխարհագրական գործոնների» (որ առանց «տարածքի» պատկերացնել հնարավոր չէ), կա՛մ (և՛) «տարածություն» ու «տարածք» հասկացությունների առանձնահատուկ կարևորությունը: Օրինակ, «գեոպոլիտիկա» («աշխարհաքաղաքականություն») հասկացությունը գիտական շրջանառության մեջ մտցնող Ռ. Չելլենը այն սահմանում է որպես «պետության՝ որպես տարածության մեջ մարմնավորված աշխարհագրական օրգանիզմի մասին գիտություն»[4], իսկ ավանդական աշխարհաքաղաքականության գերմանական դպրոցի հիմնադիր Կ. Հաուսհոֆերը՝ որպես «մարդուն շրջապատող տարածության և նրա կյանքի քաղաքական ձևերի միջև փոխհարաբերություններն ուսումնասիրող գիտություն»[5]: Ժամանակակից դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում «աշխարհաքաղաքականությունը» սահմանվում է որպես գիտություն՝ «բազմաչափ հաղորդակցական տարածությունում տարբեր պետությունների և միջպետական միությունների ազդեցության ոլորտների բաժանման և վերաբաժանման օրինաչափությունների մասին»[6], «տարածության նկատմամբ մարդու իշխանության զարգացման օրինաչափությունների մասին …»[7], «տարածության նկատմամբ վերահսկողության և այդ վերահսկողության մեխանիզմների մասին, որը դիտարկում է պետության կամ պետությունների խմբերի արտաքին քաղաքականության վրա աշխարհագրական տարբեր գործոնների ազդեցությունը»[8] և այլն:

Աշխարհաքաղաքականության հասկացությունների համակարգում մեծ բաժին են կազմում աշխարհաքաղաքական տարբեր կարգավիճակ և գործառույթ ունեցող տարածքները ներկայացնող հասկացությունները, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել գիտության այս ճյուղի բովանդակությունը և զարգացման գործընթացը:

Աշխարհաքաղաքականությունը, իր պատմության ընթացքում ուշադրության կենտրոնում պահելով պետական տարածքը՝ որպես աշխարհաքաղաքական էքսպանսիայի օբյեկտ և սուբյեկտի բաղադրիչ, այնուամենայնիվ, տարբեր պատճառներով չի լուծել պետական տարածքի՝ որպես աշխարհաքաղաքական ռեսուրսի հետազոտության խնդիրը: Ավելի շատ ուսումնասիրվել է պետության հզորությունը, իսկ ռեսուրսները հետազոտվել են ոչ թե աշխարհաքաղաքական ռեսուրսների ընդհանրական

---

[4] **Kjellen R.** *Staten som Lifsform. Stockholm, 1916, S. 23.*

[5] **Василенко И. А.** *Геополитика. Учебное пособие, М., 2003, с. 21.*

[6] **Дергачев В. А.** *Геополитика. Учебник для вузов, М., 2004, с. 434-435.*

[7] **Василенко И. А.**, *նշվ. աշխ., էջ 23:*

[8] **Нартов Н. А., Нартов В. Н.** *Геополитика. Учебник для студентов вузов, М., 2007, с. 490.*

ուսումնասիրությունների շրջանակներում (այդպիսիք ընդհանրապես չեն կատարվել), այլ որպես պետության հզորության բնութագրիչներ, կա՛մ առավելապես ուսումնասիրվել են տարածքի առանձին բնութագրիչները, հատկապես՝ օգտակար հանածոները:

Պետական տարածքը որոշակի պետության գերիշխանության տակ գտնվող երկրագնդի մաս է, որի սահմաններում տվյալ պետությունը իրականացնում է տարածքային տիրապետություն և ազգային իրավազորություն[9]: Աշխարհաքաղաքական այս ռեսուրսի հետազոտությանը վերաբերող խնդիրները բաժանվում են երկու խմբի՝ տեսական և գործնական: Առաջինը պետական տարածքի՝ որպես աշխարհաքաղաքական ռեսուրսի հետազոտության տեսական հիմքի ապահովմանը վերաբերող խնդիրներն են, իսկ երկրորդը՝ այդ հիմքի վրա խարսխված կոնկրետ պետական տարածքի՝ որպես աշխարհաքաղաքական ռեսուրսի հետազոտությունները:

Ռեսուրսի այս տեսակի հետազոտության տեսական հիմքի ապահովումը ենթադրում է առկա գիտական արդյունքների նպատակային ու արդյունավետ օգտագործում և դեռևս չլուծված խնդիրների լուծում, դրանց արդյունքների նպատակային և արդյունավետ օգտագործում: Գիտական այդ արդյունքներից ու խնդիրներից հատկապես կարևոր են՝

- իրավական ռեժիմով տարածքների (նաև պետական տարածքի) բաղադրիչների, դրանց նշանակության մասին պատկերացումները և դրանց վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը,

- պետական տարածքի և երկրի բնութագրիչների մասին պատկերացումները, պետության երկրագրական հետազոտությունների մեթոդիկաները,

- «ռեսուրս» հասկացութային համակարգի մասին պատկերացումները, դրանց և պետության երկրագրական հետազոտությունների փոխառնչությունների բացահայտումը,

- «աշխարհաքաղաքականի» մասին պատկերացումները, դրա բովանդակության հստակեցումը,

- «աշխարհաքաղաքական գործոն» և «աշխարհագրական գործոն» հասկացությունների մասին պատկերացումներն ու դրանց փոխառնչությունների հստակեցումը,

- տարածքի (պետական տարածքի) բնութագրիչների և աշխարհաքաղաքական գործընթացների, մասնավորապես՝ էքսպանսիայի տեսակների փոխառնչությունների բացահայտումը,

- աշխարհաքաղաքական տարածքների մասին պատկերացումները:

«Պետական տարածք» աշխարհաքաղաքական ռեսուրսի հետազոտության համար էական են իրավական ռեժիմով տարածքները. բացի «պետական տարածքից» և դրա բաղադրիչներից, հատկապես կարևոր է «խառը ռեժիմով տարածքը» («մայրցամաքային ծանծաղուտը (շելֆ)» և «բացառիկ տնտեսական

---

[9] *Геополитика: Популярная энциклопедия. Авторы-сост. Баришполец В., Баришполец Д., Манилов В. Под общей ред. В. Манилова, М., 2002, с. 562.*

գոտին»), որը թեև «պետական տարածք» հասկացութային համակարգի բաղադրիչ չէ, սակայն ներթափանցում է այդ հասկացության մեջ: Թեև խառը ռեժիմով տարածքը չի գտնվում որևէ պետության գերիշխանության տակ, սակայն ցանկացած ծովեզրյա պետություն իրեն հարակից մայրցամաքային շելֆում և բացառիկ տնտեսական գոտում բնական ռեսուրսների հետախուզման և շահագործման, ինչպես նաև այդ շրջանների բնական միջավայրի պահպանության ինքնիշխան իրավունքներ ունի: Իսկ այս գոտիները հիմնականում հարուստ են աշխարհաքաղաքական նշանակության բնական ռեսուրսներով, մասնավորապես՝ նավթով ու գազով և հաճախ տնտեսապես փոխհատուցում են պետական տարածքի փոքր չափերը: Թեև տարբեր են ինչպես ծովեզրյա պետություններին հարող խառը ռեժիմով տարածքների, այնպես էլ դրանց տարածքային ծովի (որը պետության ջրային տարածքի բաղադրիչ է) քանակական ու որակական բնութագրիչները, սակայն պետական տարածքի կազմի մեջ տարածքային ծովի առկայությունը և խառը ռեժիմով տարածքից օգտվելու հնարավորությունները էականորեն մեծացնում են տվյալ պետության աշխարհաքաղաքական հնարավորությունները: Ինչպես «պետական տարածք» աշխարհաքաղաքական ռեսուրսի, այնպես էլ ընդհանրապես պետության համալիր աշխարհաքաղաքական հետազոտության տեսական հիմքի ապահովման տեսանկյունից կարևորվում են միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, մասնավորապես՝ իրավական ռեժիմով տարածքներին (հատկապես պետական և խառը ռեժիմով) վերաբերողները:

«Պետական տարածք» աշխարհաքաղաքական ռեսուրսի հետազոտության համար հատկապես կարևոր են նրա բնութագրիչները: Տարածքի՝ վերը նշված տեսակների ազդեցությունը «պետական տարածք» աշխարհաքաղաքական ռեսուրսի ընդհանուր բնութագրի վրա արտահայտվում է նրա բնութագրիչների միջոցով: Իսկ պետական տարածքը (ինչպես և տարածքն ընդհանրապես) ունի քանակական ու որակական բնութագրիչներ: Աշխարհաքաղաքականության համար թեև կարևոր են և՛ մեկը, և՛ մյուսը, սակայն պետական տարածքի յուրաքանչյուր բնութագրիչ ունի աշխարհաքաղաքական տարբեր նշանակություն, իսկ որակական բնութագրիչները կարող են տվյալ տարածքի քանակական բնութագրիչների բացասական հետևանքները մեղմացնել, անգամ չեզոքացնել, և ընդհակառակը, կարող են չեզոքացնել նաև քանակական բնութագրիչների դրական ազդեցությունը:

Աշխարհաքաղաքական հետազոտություններում պետական տարածքի քանակական բնութագրիչներից (ռեսուրսներից) հիմնականում առանձնացնում են պետական տարածքի մեծությունը, իսկ որակականից՝ աշխարհագրական դիրքն ու բնական ռեսուրսները[10], սակայն սա բավարար չէ: Անհրաժեշտ է ամբողջացնել աշխարհաքաղաքական այս ռեսուրսի հիմնական

[10] **Туровский Р. Ф.** *Политическая география. Учебное пособие, М.-Смоленск, 1999, с. 105.*

բնութագրիչների համակարգը: Իսկ սրա համար էական են «ռեսուրս» հասկացութային համակարգի, երկրի բնութագրիչների մասին պատկերացումները, պետության երկրագրական հետազոտության մեթոդիկաները, «ռեսուրս» հասկացութային համակարգի բաղադրիչների և պետության երկրագրական հետազոտությունների մեթոդիկաների փոխառնչությունները: Սակայն վերոհիշյալ խնդրի լուծման շրջանակում պետական տարածքի և երկրի բնութագրիչների նկատմամբ վերաբերմունքը (աշխարհաքաղաքական կարևորությունը պարզելը) դժվարանում է նրանով, որ դեռևս հստակեցված չէ «աշխարհաքաղաքականի» բովանդակությունը: Իսկ այս հարցում կողմնորոշվելուն կօգնեն «աշխարհաքաղաքականի» մասին պատկերացումները, աշխարհաքաղաքական գործընթացի, մասնավորապես էքսպանսիայի տեսակների և տարածքի (պետական տարածքի) բնութագրիչների փոխկապակցվածության հետազոտությունները, «աշխարհաքաղաքական գործոն» և «աշխարհագրական գործոն» հասկացությունների մասին պատկերացումներն ու դրանց փոխառնչությունների ուսումնասիրությունները:

«Պետական տարածք» աշխարհաքաղաքական ռեսուրսի հետազոտության ժամանակ կարևոր են նաև ինչպես աշխարհաքաղաքականության մեջ, այնպես էլ հարակից այլ գիտություններում ձևավորված պետական տարածքի, նրա առանձին մասերի կամ մի քանի պետությունների տարածքների աշխարհաքաղաքական-ռազմավարական կարգավիճակն ու գործառույթներն արտահայտող հասկացությունները («աշխարհաքաղաքական տարածաշրջան», «աշխարհաքաղաքական դաշտ», «ազդեցության ոլորտ», «աշխարհաքաղաքական կղզի», «սանիտարական կորդոն», «բուֆերային գոտի», «սահմանամերձ պետություն (լիմիտրոֆ)», «տարանցիկ պետություն», «պլացդարմ» և այլն)[11]:

Ինչպես երևում է վերը շարադրվածից, «պետական տարածք» աշխարհաքաղաքական ռեսուրսի հետազոտության տեսական հիմքի ապահովման ընթացքում կլուծվեն նաև աշխարհաքաղաքականության համար մեթոդաբանական նշանակության այլ խնդիրներ:

О ЗАДАЧЕ ИССЛЕДОВАНИЯ ГЕОПОЛИТИЧЕСКОГО РЕСУРСА “ГОСУДАРСТВЕННАЯ ТЕРРИТОРИЯ”

САРИБЕКЯН С. Л.

Резюме

Государственная территория является важнейшим геополитическим ресурсом государства; ее исследование – одна из актуальных задач геополитики. При исследовании геополитического ресурса “государственная территория” особенно важны представления о понятиях “геополитический”,

[11] **Սարիբեկյան Ս. Լ.,** *«Տարածություն», «տարածք» և «պետական տարածք» հասկացություններն ու աշխարհաքաղաքականությունը (Օրենք և իրականություն, 2010, N 8, էջ 22):*

“геополитический фактор”, “географический фактор”, а также о понятийной системе “ресурс”, компонентах территорий с правовым режимом (в том числе государственной территории), о характеристиках государственной территории и страны, геополитических территориях. Не менее важны принципы и нормы международного права, относящиеся к территориям с правовым режимом, методики страноведческих исследований государства. Помимо сказанного, особую значимость имеет вопрос выявления взаимосвязи между характеристиками государственной территории и видами экспан- сий.

ON STUDYING GEOPOLITICAL RESOURCE “STATE TERRITORY”

S. SARIBEKYAN

Abstract

The state territory is a very important geopolitical resource of state and its study is one of the actual issues in geopolitics. When studying the state territory, it is important to understand the concepts of "geopolitical factor" and "geographic factor", the components of territories with juridical regime (as well as state territory). Of no less importance to the study are the characteristics of state territory and countries, geopolitical territories; principles and norms of international rights related to the territories with juridical regime, as well as methods of regional studies of the state.